ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

15 ՓԵՏՐՎԱՐԻ, 2018 թ.
№ 2 (1019)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
Երկշաբաթաթերթ ● հրատարակման 53-րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը 95 տարեկան է: Այդ կապակցությամբ բուհ այցելեց ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը:

ՀՀ նախագահը համալսարանի հիմնադրման 95-ամյա հոբելյանի առթիվ շնորհավորեց համալսարանի ղեկավարությանը, պրոֆեսորադասախոսական կազմին, ուսանողներին ու շրջանավարտներին՝ մաղթելով նոր ձեռքբերումներ, բեղուն ու արդյունավետ գործունեություն:

Հոբելյանական միջոցառմանը մասնակցում էին նաև ՀՀ ԿԳ նախարար Լևոն Մկրտչյանը, քաղաքապետ Տարոն Մարգարյանը, ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարիտիրոսյանը, բուհերի ռեկտորներ, տարբեր պաշտոնատար անձինք, ՀՊՄՀ տարբեր տարիների ռեկտորներ և աշխատակազմը:

ՀՀ նախագահը ՀՊՄՀ 95-ամյակի առթիվ կրթության և գիտության բնագավառներում երկարամյա, բարեխիղճ և արդյունավետ աշխատանքի համար բուհի չորս աշխատակիցների պետական պարգևների արժանացրեց:

ՀՀ Նախագահն իր խոսքում մասնավորապես ասաց.

«Մեկ անգամ ևս ցանկանում եմ սրտանց շնորհավորել այն մարդկանց, ովքեր այժմ պարգևատրվեցին մեր հայրենիքի բարձր պարգևներով: Իհարկե, պարգևները հանձնվեցին իրենց օրինական տերերին, բայց համոզված եղեք, որ սա գնահատական է նաև ամբողջ կոլեկտիվին:

Ես խորապես համոզված եմ, որ դուք ամեն ինչ անելու եք, որպեսզի Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հիմնադրման 100-րդ տարեդարձը բոլորս դիմավորենք շատ մեծ ձեռքբերումներով: Հավատացեք, իրոք, ձեր աշխատանքը չափազանց կարևոր է, և այդ աշխատանքը գնալով էլ ավելի մեծ կարևորություն է ստանում ժամանակակից աշխարհում:

Կրկին սրտանց շնորհավորում եմ բոլորիդ համալսարանի 95-րդ տարեդարձի կապակցությամբ: Եվ քանի որ յուրաքանչյուր հոբելյան, յուրաքանչյուր տարեդարձ նոր սկիզբ է առաջիկա ձեռքբերումների համար, բոլորիդ մաղթում եմ բեղմնավոր աշխատանք:

Որպես Հայաստանի շախմատի ֆեդերացիայի նախագահ, ուրախ եմ և շնորհակալ, որ դուք հատուկ ուշադրություն եք դարձնում շախմատին և միշտ հանդես եք գալիս նոր նախաձեռնություններով: Եվ պատահական չէ, որ այսօր մեզ հետ է մեր բարեկամ ՖԻԴԵ-ի նախագահ Կիրսան Իլյումժինովը, և բոլորովին պատահական չէ, որ մեր փորձը հետաքրքրություն է ներկայացնում այլ երկրների համար, իսկ սա առնվազն նշանակում է, որ մենք ճիշտ ճանապարհ ենք բռնել»:

Մանկավարժական համալսարանը 95 տարեկան է

➤1 ՀՀ նախագահը ՀՊՄՀ 95-ամյակի առթիվ վաստակավոր մանկավարժի կոչումներ շնորհեց Մասնագիտական կրթության և կիրառական մանկավարժության և Արտասահմանյան գրականության ամբիոնների վարիչներ, դոկտոր, պրոֆեսորներ Աիդա Թոփուզյանին և Ռուզան Թադևոսյանին, իսկ «Երախտագիտություն» մեդալով պարգևատրեց մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Տիգրան Թանգամյանին ու Սկզբնական կրթության ֆակուլտետի դեկան, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Հեղինե Խաչատրյանին:

Համալսարանի ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը շնորհավորեց բոլորին բուհի 95-ամյա տարեդարձի առթիվ և հպարտորեն արձանագրեց. «Մանկավարժական դարբնոցը հարուստ է իր ավելի քան 150 հազար շրջանավարտներով, որոնց թվում են գիտության, կրթության և մշակույթի ոլորտի տասնյակ հարյուրավոր երախտավորներ, և ամենակարևորը՝ համալսարանն ավարտել է հայ ուսուցիչը, որը ժողովրդի բազմադարյա պատմության մեջ կրթել և դաստիարակել է բազմաթիվ սերունդներ:

Այստեղ դասավանդել են գիտական ներուժ ունեցող նվիրյալներ, տարբեր տարիներին ամբիոններ են ղեկավարել մեր պատմության մեջ բացառիկ ավանդ ունեցող երևելի դեմքեր: Այսօր էլ լավագույն ավանդույթները շարունակվում են. բուհում դասավանդում են ՀՀ ԳԱԱ 6 ակադեմիկոս, ԳԱԱ 6 թղթակից անդամ, գիտությունների 103 դոկտոր, 360 թեկնածու, 140 պրոֆեսոր, 300 դոցենտ»:

Ռեկտորն ընդգծեց, որ առաջիկա տարիների համար բուհն իր առջև բավականին բարդ, բայց լուծելի խնդիր է դրել. անցնելով տարբեր գործընթացներ՝ համալսարանը պետք է ձեռք բերի միջազգային ճանաչում: Առաջին քայլերն արդեն արվել են: Համալսարանը համագործակցում է ԱՄՆ-ի, Եվրոպայի և Ռուսաստանի Դաշնության մի շարք առաջատար բուհերի հետ:

Ռեկտորը հավելեց, որ արտասահմանյան գործընկերները մեծ հետաքրքրություն են դրսևորում շախմատ առարկայի դասավանդման հանդեպ և նրանց հետաքրքրում են մեր փորձն ու ձեռքբերումներն այդ բնագավառում:

Ռ. Միրզախանյանը շնորհակալություն հայտնեց ՀՀ նախագահին՝ համալսարան այցելելու, շախմատի հիմնախնդիրներին ուղղված գործընթացի զարգացմանն աջակցելու համար:

ՀՀ նախագահը և հյուրերն այցելեցին համալսարանի թանգարան, որտեղ ցուցադրված են բուհի անցյալն ու ներկան խորհրդանշող արխիվային նյութեր, ապա նոր բացված «Շախմատ» միջազգային ինստիտուտ:

Նախագահը ՀՊՄՀ ռեկտորի ուղեկցությամբ ծանոթացավ նորաբաց գիտահետազոտական ինստիտուտի պայմաններին ու ծրագրերին:

Շախմատի համաշխարհային ֆեդերացիայի նախագահ (ՖԻԴԵ), ՀՊՄՀ պատվավոր դոկտոր Կիրսան Իլյումժինովն իր ելույթում հպարտորեն բարձրաձայնեց, որ Հայաստանն աշխարհում միակ երկիրն է, որտեղ շախմատը որպես պարտադիր առարկա ուսուցանվում է հանրակրթական դպրոցներում: Նա շախմատի պատմության մեջ շրջադարձային կետ համարեց համարեց «Շախմատ» միջազգային ինստիտուտի բացումը Մանկավարժականում:

ՖԻԴԵ-ի նախագահը վստահեցրեց՝ իրականացվում են մի շարք ծրագրեր, որպեսզի երկրագնդում 2020 թվականին ունենանք 1 մլրդ շախմատիստ, 1 մլրդ խելացի մարդ, և ջանքեր չեն խնայվում հայկական շախմատի փորձը ողջ աշխարհում հանրահռչակելու համար, քանզի Հայաստանը, ի տարբերություն այլ երկների, ունի ազգային, ինտելեկտուալ հսկայական պոտենցիալ»:

«Շախմատային աշխարհում դուք մրցակիցներ չունեք, իսկ նորաբաց միջազգային գիտահետազոտական ինստիտուտը միակն է, որը դառնալու է շախմատային աշխարհի լոկոմոտիվը»,-ասաց ՖԻԴԵ-ի նախագահը: Նա շնորհակալություն հայտնեց շախմատի զարգացման ուղղությամբ մեծածավալ աշխատանքների համար և ներկաներին շնորհավորեց բուհի հիմնադրման հոբելյանի առթիվ:

Շախմատը գիտական հիմքի վրա

Իր աշխատանքն է սկսում Շախմատի գիտահետազոտական ինստիտուտը (ՇԳՀԻ):

2011-2012 ուստարվանից ՀՀ հանրակրթական ծրագրում իր արժանի տեղն է զբաղեցրել շախմատի դասավանդումը՝ որպես պարտադիր ուսումնական առարկա: «Շախմատ» առարկայի ուսումնասիրության բարելավման և արդյունավետության գնահատման նպատակով Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ում 2015 թ. ստեղծվեց Շախմատի կրթական հետազոտությունների կենտրոնը (ՇԿՀԿ), որն աշխարհում առաջինն է: Փետրվարի 9-ին տեղի կունենա ՇԳՀԻ-ի (ստեղծված Կենտրոնի բազայի հիման վրա) բացման արարողությունը:

«Գոլոս Արմենիի» թերթի 2016 թ. հունիսի 10-ի համարում հրապարակվել է հարցազրույց ՇԿՀԿ-ի հետազոտական ծրագրերի ղեկավար Վահան Սարգսյանի հետ: Կենտրոնի կողմից կատարված աշխատանքը ցույց տվեց, որ այսօր համաշխարհային հանրության կողմից մեծ ուշադրություն է հատկացվում հայկական շախմատային փորձին: Բազմաթիվ զարգացած երկրներում այսօր արդեն խնդիր է դրվում շախմատը դպրոցական ծրագրում ներդնելը: Այդ նպատակով անհրաժեշտություն է առաջացել մեր փորձը այս կամ այն ձևաչափով փոխանցելու այն երկրներին, որոնք, անկասկած, ընդունում են Հայաստանի առաջնայնությունն այդ ոլորտում: Այն իր մեջ ներառում է շախմատի ուսուցիչների պատրաստման միջազգային ծրագրերի իրականացում և շախմատի դասավանդման գործընթացի արդյունավետության պատկերացում դպրոցում՝ գնահատականների աստիճանների չափելիության միջոցով:

ՇԳՀԻ-ում ծրագրվում է ստեղծել երկու բաժին: Առաջին՝ շախմատի հանրահոգեբանական ուսումնասիրման բաժին՝ ուղղված շախմատի հասարակագիտական և հոգեբնախոսական ազդեցության իրականացմանը, որի արդյունքները կներառվեն ուսումնական գործընթացում: Արդյունավետ և միջազգային ստանդարտներին համապատասխան հետազոտությունների անցկացման համար ձեռք է բերվել «էգոսկոպ» (տեսադիտակ) (սարքավորում մասնագիտական օբյեկտիվ հոգեբանական վերլուծության և թեստավորման համար), որն անցել է եվրոպական հավատարմագրում: «էգոսկոպ»-ը հաջողությամբ է գործածվում՝ թույլ տալով բացահայտել շախմատի ուսուցման բազմատեսակ առանձնահատկությունները:

Երկրորդ՝ շախմատի մշակման և կրթական հետազոտությունների բաժին: Այս բաժնի գործունեությունն ուղղված է բացահայտելու շախմատի ուսուցման մեթոդաբանական խնդիրները և նրանց լուծման եղանակները: Բաժնում ծրագրվում է շախմատի դասավանդման գործընթացի ուսումնասիրումը, սովորողների առաջադիմության ցուցանիշները, հատուկ ունակություններով երեխաների ուսուցման առանձնահատկությունները հատուկ պայմաններում: Բաժինը նաև կզբաղվի մեթոդիկայի ստեղծմամբ, որը կօգնի ուսուցիչներին իրենց ամենօրյա գործունեության մեջ, ինչպես նաև մանկավարժների պատրաստման և վերապատրաստման գործընթացի բարելավմամբ:

Հաշվի առնելով միջազգային հրատարակչությունների օրեցօր աճող հետաքրքրությունը՝ ՇԳՀԻ-ում ծրագրվում է հրատարակել միջազգային ամսագիր շախմատային կրթության հիմնախնդիրների վերաբերյալ, խմբագրական խորհրդի կազմում կներգրավվեն ➤3

Շախմատը ...

➢2 նաև արտասահմանյան մասնագետներ և փորձագետներ: ՀՄՊՀ գիտակրթական գծով պրոռեկտոր, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սրբուհի Գևորգյանը նշում է, որ «այս տարի լրանում է բուհի 95-ամյակը, և դա այնպիսի ժամանակահատված է, երբ համալսարանը որոշակիորեն հանրագումարի է բերում ոչ միայն դասավանդման, այլև գիտահետազոտական գործունեությունը: Եվ քանի որ արդեն բուհի գիտական տենդենցներում առկա են որոշակի գերակայությունների զարգացման նախադրյալներ, հոբելյանի համատեքստում էլ որոշվեց բացել ՇԳՀԻ-ն: Դա հիմնված էր գիտական հայեցակետերի վրա, որոնք ի սկզբանե որդեգրել է ՀՊՄՀ-ն: Ինստիտուտի բացման գաղափարը պատահական չէ: Մեր համալսարանը վաղուց արդեն ուներ փորձարարական մշակումներ տվյալ ոլորտում: Երբ շախմատը լիակատար ձևով մտավ հանրակրթական ծրագիր, հնարավորություն ընձեռվեց գիտական մակարդակում հետևելու մասնագետների պատրաստման որակին, «Շախմատ» առարկայի դա-

սավանդման մեթոդիկային, որն ինքնին բավական առանձնահատուկ է. չէ՞ որ շախմատը խաղ է:

Մշակումները տարբերակված էին երկու հիմնական ուղղություններով՝ հանրահոգեբանական և հոգեբնախոսական: ՇԿՀԿ-ն 2015թ.-ի հունվարից անցկացրել է տարբեր հետազոտություններ, որոնցում վերջին տարիներին ընդգրկվել են Հայաստանի և ԼՂՀ-ի 100-ից ավելի դպրոցներ: Աշխատել են ինչպես մանկավարժության, հոգեբանության, ներառական կրթության ամբիոնների ներկայացուցիչներ, այնպես էլ ՀՀ առաջավոր մասնագետներ: Հետազոտությունների և դիտարկումների արդյունքները համատեղ մշակվել են և ներկայացվել գիտական հանրության դատին: Անցկացվել են միջազգային երեք խոշոր գիտական կոնֆերանսներ, որոնց արդյունքները հրատարակվել են համաշխարհային հեղինակավոր ամսագրերում:

Յուրաքանչյուր գիտական գործունեություն ունի ինչպես իր կողմնակիցները, այնպես էլ ընդդիմախոսները: Ստացված տվյալները հավաստում են, որ աշխատանքը ճիշտ ուղղությամբ է տարվում: Հաշվի առնելով ժամանակի պահանջմունքները՝ ՀՊՄՀ-ն, լինելով երկրի մանկավարժական գլխավոր բուհը, որոշեց, որ հասունացել է գիտահետազոտական առավել խոր գործունեության անհրաժեշտությունը»:

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ում ստեղծվեց շախմատի՝ աշխարհում առաջին գիտահետազոտական ինստիտուտը: Անցած տարիներին լուրջ աշխատանք է կատարվել: Ապացուցվել է, որ շախմատը, ինտելեկտուալ խաղ լինելով, խթանում է երեխաների ճանաչողական գործունեությունը (մտածական գործունեություն, որի արդյունքում մարդը հասնում է որոշակի ընկալման ու իմացությունների): Ուժեղանում է երեխայի հանրային ակտիվությունը: Իմաստուն խաղը ձևավորում է ինտելեկտ՝ օգնելով զարգացնելու տրամաբանական մտածողությունը: Շախմատը նպաստում է հանրային իրազեկության զարգացմանը (հասարակության մեջ մարդու՝ իրեն համարժեք պահելու և հաջողակ լինելու կարողություն): Երեխան սովորում է վերլուծել, որոշումներ ընդունել, արագ արձագանքել կատարվածին, տեղաբաշխել առաջնահերթությունները (գերակայությունները):

Եթե խոսքը վերաբերում է երեխայի հետաքրքրություններին, առաջին պլան են մղվում դասավանդման որակն ու մեթոդիկան: Ուսուցիչը պետք է կարողանա գրավել աշակերտին՝ օգտագործելով շախմատի խաղային բաղադրիչը: Արդյունքն, իհարկե, տարբեր կլինի: Սակայն շախմատն ինքնին խթան է յուրաքանչյուր երեխայի դինամիկ զարգացման համար: Այսօր մշակվում է առավելագույնս արդյունավետ մեթոդիկա, բայց գործընթացը չի կարող մնալ իր տեղում: Ժամանակն անցնում է, փոխվում է երեխան, հանրային իրադրությունը: Հետևաբար աշխատանքը պետք է տարվի մեր ժամանակների իրողությունները հաշվի առնելով: Անցած վեց տարիների ընթացքում կուտակվել է թերությունների հաղթահարման փորձ, որն ի սկզբանե եղել է «Շախմատը դպրոցում» ծրագրի ներդրման առաջին իսկ փուլում: Դա պետք է նպաստի ՇԳՀԻ-ի առավելագույնս արդյունավետ գործունեությանը:

«Գոլոս Արմենիի»

Քննարկում

Մանկավարժական համալսարանի ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը հյուրընկալեց Երևանում գիտության և մշակույթի ռուսական կենտրոնի ներկայացուցիչներին՝ տնօրեն Սերգեյ Ռիբինսկու գլխավորությամբ:

Ռեկտորը ներկայացրեց Մանկավարժական համալսարանի համագործակցությունը ռուսաստանյան մի քանի առաջատար բուհերի հետ՝ ընդգծելով կարևորությունը բուհի համար: Ռուբեն Միրզախանյանը նկատեց, որ Մանկավարժական համալսարանի ուսանողների մի մասը մարզերից է, և բուհն ավարտելուց հետո այդ ուսանողներն աշխատանքի են անցնում մարզերում, հետևաբար ռուսաց լեզվի մասնագետներն ավելի մեծ անելիք ունեն մարզերում: Ռուսաց լեզվի մակարդակը բարձր պահելու համար անհրաժեշտ է նաև, որ բուհում դասավանդեն ՌԴ-ից ժամանած դասախոսները, քանզի նրանք հենց լեզվի կրողներն են, ավելի արդյունավետ կլինի լեզվի ուսուցումը:

Սերգեյ Ռիբինսկին պատրաստակամություն հայտնեց շարունակել համագործակցությունը, իսկ հստակ առաջարկների դեպքում նա խոստացավ քննարկել ավելի հանգամանորեն, անհրաժեշտության դեպքում՝ ամրագրել հուշագրով:

ԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿԻՑՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐՁՐ ՊԱՀԵԼՈՒ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՄԲ

2013թ. օգոստոսին ձևավորված հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնը վարիչ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ալլիտա Դոլուխանյանի ղեկավարությամբ գործունեության շուրջ հինգ տարիների ընթացքում ակտիվորեն արձագանքում է տարբեր հայագետների գործունեությանը և գիտական իրադարձություններին՝ իրագործելով իր հիմնական նպատակը՝ ազգային ինքնագիտակցությունը բարձր պահելու առաքելությունն ու ազգային արժեքների սերմանումը: Այդ աշխատանքի խոսուն վկան ամբիոնի սեփական նախաձեռնությամբ հրատարակվող և արդեն պարբերական դարձած հոդվածների թվով ութ ժողովածուներն են, որոնք արտացոլում են հայ ժողովրդական բանահյուսության, հայ հին և միջնադարյան գրականության, հայ գրաքննադատական մտքի պատմության, հայ գրականության դասավանդման մեթոդիկայի ուղղությունների ցարդ բաց մնացած կամ ուսումնասիրության կարոտ հարցերի մի ամբողջ շրջանակ: Ժողովածուներում հոդվածներով հանդես են եկել ամբիոնի բոլոր անդամները՝ ամբիոնի վարիչ՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա. Դոլուխանյանը, բան. գիտ. թեկնածուներ Պ. Սահակյանն ու Լ. Հովսեփյանը, մանկ. գիտ. թեկնածուներ Ռ. Դոլուխանյանն ու Գ. Մարդյանը: Ամեն առանձին ժողովածու ընդգծում կամ նվիրված է հայ ժողովրդի կյանքում, հայագիտության մեջ էական դեր ունեցող գործիչների, որոնց կենսափորձն ինքնին դաստիարակչական է, իսկ նրանց գիտական գործունեությունը՝ շատ առումներով ուսումնասիրության կարոտ: Գրքույկներն ընթերցողին ներկայանում են Ա. Դոլուխանյանի հայերեն, ռուսերեն և անգլերեն առաջաբաններով, որոնք այս հոդվածները հասանելի են դարձնում նաև արտերկրի գրադարաններին:

Այս նախաձեռնությունն սկսվեց դեռ 2012-ին, երբ կարևորելով մեծ Համարող Անանիա Շիրակացու՝ միջնադարյան այս լայնախոհ և «հայ ժողովրդին դեպի լույսը տանող առաջնորդի» գործը և դերը, հեղինակի ծննդյան 1400-ամյա հոբելյանի առիթով ամբիոնը հանդես եկավ հոդվածների իր առաջին՝ ***«Անանիա Շիրակացի»*** ժողովածուով: Ա. Դոլուխանյանը «Անանիա Շիրակացու ինքնակենսագրությունը» հոդվածով ընդգծում է միջնադարյան այս ինքնատիպ ինքնակենսագրական երկի դաստիարակչական, գիտական և ճանաչողական արժեքը: Այն նաև սերտորեն կապված է համընդհանուր քաղաքակրթության հետ և տալիս է մի ամբողջ ժամանակաշրջանի պատկեր: Այդ է պատճառը, որ ժամանակին արժանացել է Ֆ. Կոնիբերի բարձր գնահատականին: Անանիա Շիրակացու երկու ճառերի նորովի՝ հայրենասիրական մեկնաբանությունները քննում է Պ. Սահակյանը «Անանիա Շիրակացու «Հայտնության» և «Զատկի» ճառերը» հոդվածում: Խնդիր-հանելուկների ճանաչողական ու բնագրագիտական կողմերն է քննում Լ. Հովսեփյանը «Անանիա Շիրակացու խնդիր-հանելուկները» հրապարակման մեջ:

2014թ. լույս տեսած ***«Գրաբարյան բնագրերի դասական թարգմանիչը (Ա. Աբրահամյան)»*** (Երևան, 2014), ***«Հովհաննես Շիրազը և հայ ժողովրդական բանահյուսությունը»*** (Երևան, 2014), ***«Հայ գրականագիտության դասականը»***՝ նվիրված ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Սերգեյ Սարինյանին, ժողովածուները բնութագրում են ամբիոնի գիտական հետաքրքրությունների բազմազանությունը:

«Գրաբարյան բնագրերի դասական թարգմանիչը» ժողովածուն նվիրված է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Արսենի Աբրահամյանի՝ հայ մատենագրության երկու կարևոր դեմքերի՝ Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոցի» և Ստեփանոս Օրբելյանի «Սյունիքի պատմության» գրաբարյան բնագրերի աշխարհաբար փայլուն թարգմանություններին: Ա. Դոլուխանյանը քննում է եզնիկյան բնագրի կարևորությունն ու Ա. Աբրահամյանի աշխատանքի խորությունը, ընդգծում թարգմանչի ծանոթագրությունների խիստ գիտական նշանակությունը: Լ. Հովսեփյանն ու Պ. Սահակյանը ներկայացնում են Ստեփանոս Օրբելյանի Պատմության աշխարհաբար թարգմանության գեղարվեստական հատվածների կատարելությունն ու թարգմանչի ծանոթագրությունների գիտականությունը. ողջ նյութը քննված է բանահյուսական երկերի, միջնադարի հայ մատենագրության հարուստ աղբյուրների զուգահեռներում:

Գնահատանքի մեկ այլ դրսևորում է նաև Սերգեյ Սարինյանին նվիրված ***«Հայ գրականագիտության դասականը»*** խորագրով հոդվածների ժողովածուն: Անվանի գրականագետի կյանքն ու գործը համակողմանիորեն ներկայացնում է Ա. Դոլուխանյանը «Դասական գրականագետը» դիմանկարային էսսեում: Երկրորդ հոդվածը նվիրված է Ս. Սարինյանի «Շարունակվող լեգենդ» գրքին և նվիրված է տաղանդավոր գրող և լրագրող, խիզախ ճանապարհորդ, քաղաքական գործիչ ու հրապարակախոս Զորի Բալայանին: Քննության նյութ դարձնելով Ս. Սարինյանի պատմական բովանդակություն ունեցող գրական երկերի քննադատությունը՝ այս ժողովածուն կապ է ստեղծում ժամանակակից գրաքննադատության և գրականության պատմականության միջև. այդ թեմաներին են վերաբերում Լ. Հովսեփյանի «Պատմական խնդիրները Լևոն Շանթի դրամաներում՝ ըստ Սերգեյ Սարինյանի» և Պ. Սահակյանի «Գրաքննադատ Ռաֆֆին ըստ ակադեմիկոս Սերգեյ Սարինյանի» հոդվածները: Հետաքրքիր են ժողովածուի՝ Ռ. Դոլուխանյանի «Պատմության փիլիսոփայությունն ըստ Մուրացանի «Ռուզան» պատմական դրամայի» և Գ. Մարդյանի «Սամվել» պատմավեպի ուսուցումը սարինյանական մեկնություններով» հոդվածները, որոնք ունեն մեթոդական կտրվածք և կապվում են հայ գրականության դասավանդման մեթոդիկայի հետ:

Հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի ուղղություններն են նաև բանահյուսությունն ու հայ գրականության դասավանդման մեթոդիկան: Այս երկու ուղղությունները միասնաբար արտացոլված են ***«Հովհաննես Շիրազը և հայ ժողովրդական բանահյուսությունը»*** (Երևան, 2014), ***«Հովսեփ Օրբելին և «Սասունցի Դավիթ» հայ ժողովրդական էպոսը»*** (Երևան, 2015) հոդվածների ժողովածուներում: Հովհաննես Շիրազի ծննդյան 100-ամյա հոբելյանին լույս ընծայված ժողովածուն լուսաբանում է, թե որքան խոր և ինչպիսի կապերով են կապված հեղինակի պոե- ➢6

ԳՆԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ *Կուլտուրայի ֆակուլտետի հեռուստառադիոլրագրության ամբիոնի դասախոս*

«ԳԱԼԻՍ Է ՄԻ ՍԵՐՈՒՆԴ, ՈՐԸ ՉՈՒՆԻ ՆԱԽԿԻՆ ՍԵՐՆԴԻ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ, ԲԱՅՑ ՄԵՋՆԻՑ ԱՌԱՎԵԼ Է»,-

ասում է ԳՆԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԸ

- Ձեր մասին կարելի է ասել՝ հետաքրքիր ու կիրթ լրագրող, փորձառու խմբագիր, ուսանողների հետ հեշտ, պարզ ու շիտակ հարաբերություններ ստեղծող դասախոս... Ի՞նչ կավելացնեք...

- Ինձ բախտ է վիճակվել 90-ականներից ի վեր աշխատել շատ լավ լրագրողների և խմբագիրների, ժուռնալիստների և մարդկանց՝ Լևոն Պարոնյանի, Մայա Ղազարյանի, Նունե Սարգսյանի (Ինտերնյուսի ղեկավարն էր, այժմ կոչվում է այլընտրանքային լրատվամիջոցների կազմակերպություն), Մեսրոպ Մովսեսյանի (Ա1 պլյուս), Բորիս Նավասարդյանի (Երևանի մամուլի ակումբ) հետ: Դա իմ մասնագիտական ամենակարևոր ձեռքբերումն եմ համարում, որ կարողացել եմ շփվել նման հրաշալի մասնագետների հետ, որոնց շնորհիվ և օգնությամբ ես կայացել եմ:

Աշխատել եմ «Հանրային» և «Արմնյուզ» հեռուստաընկերություններում, «Շողակաթ»-ի կազմավորման տարիներին եղել եմ ծրագրերի ղեկավար: Այժմ «Արմենիա»-ի լրատվական դեպարտամենտի և «Newmag» ամսագրի գլխավոր խմբագիրն եմ:

- Հեռուստատեսության այսօրը. ի՞նչ հաղորդումներ են մատուցվում հանրությանը և ինչպե՞ս:

- Գիտեք, հեռուստաապրանքը մի բան է, որ ով ինչպես կարողանում է՝ մատուցում է: Հեռուստաընկերությունները սովորաբար աշխատում են իրար հետ մրցել:

- Ժմոռանալով, որ նաև ճաշակ են ձևավորում:

- Երբեմն մոռանալով...

Բայց ճաշակն էլ շատ վիճելի ու կասկածելի մի բան է: Մեկի համար այս կոմպոզիտորի ստեղծագործությունները ծանծրալի են, մյուսի համար՝ հրաշալի: Ճաշակի և կրթության խնդիր է: Մենք չենք կարող ասել, որ հատկապես ինչ-որ բան պետք է լինի ճաշակով պատրաստված, որովհետև ո՞վ պետք է որոշի, թե ինչ է նշանակում ճաշակով: Ամենաբարդ խնդիրն է, հատկապես ռեյտինգային դարաշրջանում, երբ մենք գործ ունենք հիմնականում չոր ու ցամաք թվերի հետ. այսքան մարդ նայեց՝ ուրեմն ռեյտինգը բարձր է կամ ցածր: Պարզապես Հայաստանում ռեյտինգը և որակը շփոթում են իրար հետ: Ռեյտինգը հաղորդման որակի հետ բացարձակապես կապ չունի. լավ հաղորդումը կարող է ունենալ ցածր ռեյտինգ և հակառակը... Պարզապես նրանք, ովքեր սպառում են ապրանքը, հակված են իրենց ժամանցն անցկացնել այդ կերպ: Տոնավաճառից մեծ թվով մարդիկ հազար դրամանոց ապրանքներ են գնում, մարդ էլ կա՝ բրենդային խանութներից է գնում: Բրենդային ապրանքներ գնողները քիչ են, տոնավաճառներում առևտուր անողները՝ շատ:

- Ո՞րն է այսօրվա լրագրողի հավատամքը՝ ազնիվ և անաչառ տեղեկատվություն հաղորդե՞լը, թե՞ հարմարվելը ժամանակի ռիթմին:

- Մերօրյա ժուռնալիստիկան մի քիչ պրոբլեմատիկ է, որովհետև մի անհասկանալի անցումային փուլ է ապրում, երբ շատ դժվար է հասկանալ՝ ով է լրագրողը: 15-20 տարի առաջ դա հասկանալի էր: Այսօր հեռուստատեսությունը մրցում է ինտերնետի հետ, հեռուստատեսային ապրանքը՝ վիդեոբլոգային ապրանքի հետ, սոցցանցերում են մարդիկ ռեալիզացվում, և յուրաքանչյուր ոք կարող է դառնալ ինքնուրույն հեռարձակող, ինքնուրույն ինֆորմացիա, հայթայթող, տարածող, պատրաստող: Քանի որ հասարակությունն էլ պատրաստ չի, ցանկացած կարծիք ընկալում է որպես ինֆորմացիա:

Լրագրողի գործը, համար մեկ խնդիրը, կարծում եմ, անկողմնակալ լինելն է, թեև պարզվում է, դա էլ վիճելի է, և մի քիչ լարվում են հարաբերությունները: Օրինակ, ԱՄՆ-ում Թրամպի ընտրությունների ժամանակ մամուլը հանկարծ դադարեց լինել անկողմնակալ, և բոլոր լրագրողները միանգամից դարձան խիստ կողմնակալ: Թրամպը գտնում է, որ միայն թվիթերն է անկողմնակալ, որտեղ ինքը կարող է տեղեկատվություն տարածել, և հրաժարվում է լրագրողների հետ շփումների հնարավորությունից:

- Հեռուստատեսությունը մեծ հաշվով զիջում է համացանցին՝ չունենալով նրա հնարավորությունները: Ինչպե՞ս է լրացվում այդ բացը, ինչպես են այդ երկուսը հնարավորինս «մոտեցվում» իրար:

- Մի ժամանակ հեռուստատեսության համար շատ կարևոր էր արագ հաղորդել լուրեր, լինել առաջինը, որ մարդիկ տեղեկությունն առաջինը քեզնից իմանան: Տարիներ առաջ այդպես էր աշխատում CNN-ը: BBC-ի սկզբունքն այլ է՝ նա չի ճգնում լինել առաջինը. ավելի լավ է մի քիչ հետ մնալ մրցակիցներից, բայց տալ հավաստի, ճշմարիտ, հստակ տեղեկատվություն:

Հեռուստատեսությունը ինտերնետի արագության հետ չի կարող մրցել, կարող է մրցել միայն բովանդակության, որակի առումով, խմբագրական, լրագրողական բարձրակարգ աշխատանքով:

Հեռուստատեսության վրա մեծ փողեր են դրվում ամբողջ աշխարհում, և նա չի պատրաստվում իր տեղը զիջել ինտերնետին, ընդհակառակը, հեռուստատեսությունը փորձում է մրցակցային վիճակից անցնել գործընկային հարաբերությունների: Հեռուստատեսությունն իր ապրանքը դնում է նաև համացանցում:

- Ի՞նչ կասեք մայրենի լեզվի մերօրյա աղավաղումների մասին: Այսօր լրագրողների մի մասը գրում է՝ ինչպես կարող է, ոչ թե՝ ինչպես ճիշտ է կամ պետք է... Որևէ լուծում կառաջարկե՞ք...

- Ես առաջարկ չունեմ: Վախենում եմ, որ ոչ ոք չունենա: Լեզվի մաքրությունը պետք է պահպանել ուսումնական, կրթական գործընթացներով և վերահսկողությամբ, բայց ինտերնետը դուրս է վերահսկողությունից: Ինձ համար հասկանալի է հասարակության դեգրադացիան: Արժեքներն են փոխվում. գալիս է մի սերունդ, որը չունի նախկին սերունդների պատրաստվածությունը, բայց մեզնից առավել է...Դա ուրախացնում է:

- Ի՞նչն է Ձեզ զարմացնում Ձեր աշխատանքային պրակտիկայում:

- Ինձ միշտ զարմացնում է այն, որ ուսանողները վճարում են իրենց ուսման համար և դասի չեն գալիս, չեն հետաքրքրվում դասով, իսկ երբ դասի են գալիս՝ հեռախոսով գաղտնի մեսիջներ են գրում իրենց ծանոթներին... Ես նրանց ասում եմ՝ ստացեք այն գիտելիքը, որ ես եմ տալիս, և պահանջեք ավելին, չէ՞ որ ձեր ծնողները վճարում են...Փոխեք դասախոսին՝ եթե նրա գիտելիքները ձեզ չեն բավարարում: Նույնիսկ մի կուրսում ասացի, որ ծնողական ժողով եմ հրավիրելու, որպեսզի ծնողները գան և հասկանան ինչի համար են վճարում...

- «Ամեն սերունդ նախ և առաջ մտածում է լռության մեջ, իսկ երբ խոսել է սկսում՝ բարկացնում է ավագներին...». Սևակի խոսքերն են...

- Երբ նոր սերունդն ասելիք ունի կամ ասելիք ունենալու ցանկություն՝ բարկացնում և ձեռնոց է նետում ավագներին, բնականաբար, առաջանում է հայրեր և որդիներ պրոբլեմը, ուր յուրաքանչյուր որդի ձգտում է գերազանցել հորը: Հենց դա է ապահովում պրոգրեսը: Երբ նոր սերունդն ասելիք չունի կամ ասելիքի ցանկություն, արդեն պրոբլեմ չկա...

- Այս դեպքում պետք է խոսել արժեքների կորստի մասին:

- Արժեքը մի բան է, որը տրանսֆորմացիայի է ենթարկվում, փոփոխվում է: Մի սերունդ կորցնում է մի բան, որը ինքը համարում էր արժեքավոր, մյուսը ձեռք է բերում մի բան, որը ինքն էր համարում արժեքավոր... Պարզապես արժեքներն են փոխվում: Յուրաքանչյուր սերունդ այդ արժեքներին նայում է հակադիր տեսանկյունից:

- Բայց կան մնայուն արժեքներ, որոնք կարևոր են բոլոր սերունդների, ժամանակների համար՝ հայրենիքը, լեզուն, հողը...

- Այդպես է, եթե մանկուց մեզ վարժեցնում են, սովորեցնում, դա մեզ համար դառնում է սովորական, իսկ երբ չեն սովորեցնում՝ դրանք մեզ համար որևէ արժեք չունեն:

- Տարբեր լեզուների իմացությունը հրաշալի է, բայց ոչ մայրենիի հաշվին...Ի՞նչ եք կարծում՝ մենք օտարամո՞լ ազգ ենք:

- Ես ճանաչում եմ բազմաթիվ երիտասարդների, որոնք հրաշալի անգլերեն, գիտեն և խայտառակ հայերեն, հրաշալի ռուսերեն գիտեն և խայտառակ հայերեն: Հերոդոտոսը գրում էր Արմենիայի մասին և ասում էր, որ ընտանիքներում հայերը իրար հետ պարսկերեն էին խոսում: Դա մոտավորապես նույն բանն է, որ տարիներ առաջ հայ ընտանիքներում իրար հետ ռուսերեն էին խոսում:

Ես չեմ կարող պահանջել որ բոլորը մտածեն այնպես, ինչպես ես եմ մտածում... Ես կարող եմ ակնկալել, որ իմ շրջապատում շատ լինեն ինձ նման մտածող մարդիկ...

Ֆեյսբուքի իմ էջում «Պարզագույն ճշմարտություններ» խորագրի ներքո ես ներկայացնում եմ վերջին 20 տարվա ընթացքում լրատվության մեջ հանդիպող հիմնական սխալները, գրում եմ նաև դրանց ճիշտ տարբերակները: Ովքեր ուզում են՝ կարդում են, մտապահում: Ինչ կարող եմ ասել, երբ մարդիկ շատ հաճախ իրար հասկանում են անդեմ, անորոշ նախադասություններով...

- Մաքուր ու գեղեցիկ հայերենով խոսելն ու գրելը որքանո՞վ է համահունչ մարդու ներքին աշխարհին...

- Ես շփվում եմ նաև կիրթ մարդկանց հետ, ովքեր խոսել չգիտեն: Շատ կիրթ ու քաղաքավարի երիտասարդի հետ եմ շփվում հիմա, որն ուզում է դառնալ լրագրող, որը հայերեն չգիտի, որովհետև չի կարդում: Ես ուսանողներին խորհուրդ եմ տալիս կարդալ Տերյանի, Բակունցի, Դեմիրճյանի ստեղծագործությունները, ոչ թե մտքում, այլ բարձրաձայն կարդալ հայերեն լեզվով ստեղծված գեղեցիկ տեքստեր...

- Ինչպիսի՞ն է Գնել Նալբանդյանը աշխատավայրում և տանը: Հատկապես ո՞ր հատկանիշներն են Ձեզ օգնում կամ խանգարում:

- Մարդիկ հիմա դադարել են լինել աշխատավայրում կամ տանը. մենք աշխատավայրում տանն ենք և տանը մեր աշխատավայրում ենք: Մենք հարմարվում ենք աշխատանքային պայմաններին, ոչ թե պայմանները հարմարեցնում մեզ: Ապրելուն և աշխատելուն ինձ օգնում են հարցերը. լրագրողի հիվանդությունը՝ հարց ձևակերպել, հասկանալ՝ ի՞նչ գիտես և՝ ի՞նչ չգիտես, և ավելի բարդ հարց՝ այն, որ դու գիտես, պարզվում է՝ ոչինչ չգիտես...

- Ի՞նչ է Ձեզ համար հայրենիքը: Կկարողանա՞ք ապրել հայրենիքից դուրս:

- Ես կարծում եմ՝ ոչ թե հայրենիքից են ուզում գնալ, այլ պետությունից: Հայրենիքը մի բան է, որը չունի սահմաններ: Հայրենիքը միշտ մարդու սրտում է, իսկ պետությունը՝ ստամոքսում: Անհնար է հայրենիքից հեռանալ, ուր էլ գնաս՝ հայրենիքը քո հոգում է, ինչպես քո մայրը: Պետությունն ընդամենը զգեստ է, որտեղ ապրող մարդիկ այն վատ են կարել: Խելամիտ մարդիկ փորձում են այդ կոստյումը վերաձևել, իսկ նրանք, ովքեր տկարամիտ են, ուզում են գնալ և ուրիշի կարած զգեստը հագնել...

- Գեղեցիկի Ձեր ըմբռնումը:

- Ես իրոք չգիտեմ՝ ինչ է գեղեցիկը: Ես գիտեմ, որ ինչ-որ բան գեղեցիկ է, ինչ-որ բան՝ տգեղ: Ես գիտեմ, որ ճաշակին ընկեր չկա: Ջրվեժը կամ ծառը գեղեցիկ են դառնում, երբ նայում ենք նրանց... Ես գիտեմ՝ գեղեցիկը մի բան է, որը մենք ենք հորինել: Մեր պատկերացումները ամեն ինչի մասին, հատկապես գեղեցիկի և տգեղի մասին մենք ինքներս ենք ստեղծում և դառնում նրանց գերին կամ զոհը:

- Ի՞նչը Ձեզ չի բավարարում խմբագրի աշխատանքում:

- Խմբագրի լիակատար երջանկությունն այն կլինի, երբ իր կարիքն այլևս չի լինի, երբ լրագրողը կարողանա իր միտքը ձևակերպել այնպես, որ խմբագրելու կարիք չլինի: Խմբագրի խնդիրն այն է, որ լրագրողն ընկալի իր կատարած փոփոխությունները: Եթե մենք անընդհատ նույն սխալներն ենք ուղղում՝ դա նշանակում է սիզիֆյան աշխատանք, դա մեծագույն անեծք է խմբագրի համար:

- Ունե՞ք խոստումնալից ուսանողներ, որոնց հետ կարելի է կապել ժուռնալիստիկայի վաղվա օրը:

- Կյանքը ստիպի՝ ամեն ինչ կանեն: Որովհետև կյանքը պատերազմի նման է... Ես իմ ուսանողներին ասում եմ. «Եթե չկարողանաք սպանել, ձեզ կսպանեն, եթե չկարողանաք փրկվել, ուրեմն կորած եք, անպատրաստ եք գնում որևէ հարցազրույցի, նշանակում է առանց զենքի եք գնացել շփման գիծ, ուրեմն պարտվելու եք...Դուք որսորդ եք կամ որս...Որոշեք՝ որն եք ուզում»:

- Ուրիշ ինչի՞ մասին կուզեիք խոսել:

- Ես կուզեի ամենավերջում անդրադառնայինք մեր համալսարանի թերթին: Իմ մեծագույն ցանկությունն է, որ բուհական թերթը անվճար չբաժանվի, որովհետև եթե մի բանի համար չես վճարում՝ արժեքը չես իմանում: Նաև կուզենայի, որ թերթը ուսանողների համար արտահայտվելու հարթակ լիներ:

- Թերթի էջերը բաց են յուրաքանչյուր դասախոսի և ուսանողի համար: Մնում է գրելու և արտահայտվելու ցանկություն ունենան...

Շնորհակալ եմ հետաքրքիր և անկեղծ զրույցի համար:

Հարցազրույցը՝ Սիլվա ԱՍՐՅԱՆԻ

ՄԵՐ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԸ

Հրանտ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

«Հաղթիր ազնվությամբ ու պատվով, պարտվիր արժանապատվությամբ»:

«Մշակույթը ապրելու կերպ է, ոչ թե կյանքի զարդարանք»:

«…Մեր ներսի անպատասխանատու ալարկոտի հետ դաշնակցած, մեր գործն ու վարքը կապում ենք՝ որպես թե դեմոկրատական շարժման, որպես թե բռնակալության տապալման, որպես թե Անկախ պետությունների համագործակցության անհեռանկարայնության հետ, և որպես թե ահա մենք ինչ-որ մի բանի առաջամարտիկներ ենք: Մինչդեռ ինքներս պիտի լինեինք մեր գլխի տերը, երեկ՝ նախկին հանրապետության, այսօր՝ այս նոր հանրապետության առջև մեր պարտականությունները կատարեինք բծախնդրությամբ… Երեկ բանակը չենք լիցքավորել հայկական ուժերով, երեկ առաջադրված բարեփոխումները չենք լցրել հայկական մտքի և ուժի կարողությամբ, չենք ենթարկվել երեկվա մեխանիզմին և չենք ենթարկվում այսօրվա մեխանիզմին…շատ անպատասխանատու ենք…»:

«…Մենք անընդհատ ասում ենք՝ չենք արել, չենք արել… Ո՞վ էր անելու, ինչո՞ւ չի արել: 1988 թվականից հետո բոլոր հաջորդ իշխանությունները կրկնել են նախորդների սխալները և ավելացրել են սեփականը: Մենք ինչո՞վ ենք, օրինակ, լավը բաբելացիներից, ասորեստանցիներից, մյուսներից, որոնք կորան գնացին. գուցե մենք էլ ենք կորել, պարզապես դեռ չենք գիտակցում…»:

«…Մթնոլորտը, ոչ, չի պարպվել. դեռ դարաններ են սքողվում, դեռ դղյակներ են հօդս ցնդելու, դեռ արյունոտ հաշվեհարդարներ են լինելու, Հայն ու Հայը, Հայն ու Հայաստանը դեռ անցնելիք ճանապարհ ունեն իրարից հեռանալու…»:

«…Պետք է մտածեինք պահանջատիրոջ մասին և ոչ պահանջատիրության: Պետք է սիրեինք այս Հայրենիքը, հոգայինք այսօրվա հոգսը: Այլապես, հնարավոր է, վաղը պահանջատիրությունը բավարարվի՝ մեջտեղը պահանջատեր չլինի, մանավանդ որ այսպես մի անգամ արդեն եղել է. ձեզ Երզնկայից Շուշի երկիր ենք տալիս, բայց ժողովուրդ չունեք…»:

«…Երկրները առհասարակ պարտվում են իդեոլոգիաների պարտությունից հետո, մշակույթների պարտությունից հետո, երկրները, պետությունները զոր ու զորքով գրոհում են, իհարկե, մշակույթների նախնական գրոհումներից հետո: Եվ մի մշակույթը տեղի է տալիս մի այլ մշակույթի, որից հետո հաջորդում է գրոհող երկրի զորքերի ներխուժումը…»:

«ՀՈԳՈՒՑ ԲԽՈՂ ԵՐԳԻ ԹԵՎԸ»

Բանաստեղծի կյանքը անծիր տառապանք է, մանավանդ եթե, ինչպես ինքն է ասում, իր երգը «ոսկեերակ հոգու հանքից է ծնվել»: Պոետական կյանքի՝ «արարումներով ու տքնանքով» լի ճանապարհը իմաստության, մտքի ու խոսքի ամբարման յուրահատուկ շտեմարան է, որից յուրաքանչյուր ոք վերցնում է իրենը: Բանաստեղծը նման է անընդհատ լցվող ու երբեք չդատարկվող շտեմարանի, որտեղ մեզնից յուրաքանչյուրը իր հոգու տաք անկյունն է փնտրում. «Ուրիշ է քո ունեցածը՝ հոգու գանձը երկնառաք…»:

Հենց այդպիսին է բանաստեղծ Լիպարիտ Սարգսյանը, ով արդեն հատել է իր կյանքի ութ տասնամյակը և ստեղծել չորս տասնյակից ավելի գեղարվեստական գրքեր, ուր բանաստեղծական խոհը խորհում է ընթերցողի հետ, ուր միտքն ու հոգին թափառում են մի ուրիշ՝ գեղեցիկ ու լուսավոր երազների աշխարհում՝ հեռու մարդկային անարդարությունից ու կեղծիքից:

Պետք է մեղմորեն ու զգույշ մտնել Լիպարիտ Սարգսյանի բանաստեղծական աշխարհ, քանզի այդ փոքր տիեզերքում «երգը կսկիծ է ու հոգու խռովք» կա, որում էլ տարիների ընթացքում զուլալվել է հայոց բնաշխարհում արարող մարդուն, հողին, ծառին ու թփին, մարդուն ու մարդկայինին ուղղված խորախորհուրդ ասելիքը.

Ես ողջ կյանքում արարել եմ մի
աշխարհ՝
Հյուսված սիրո ցավ ու վշտից,
կարոտից,
Որ երբ մի օր բացեք դուռը դուք նրա,
Զգաք շունչը, տրոփյունը իմ սրտի…

Դասական պոեզիայի բոլոր ժանրերն ակոսած բանաստեղծն անվարան մուտք է գործել նաև քանդակազարդ քառյակների աշխարհ՝ մեծն Թումանյանին կարծես թե չզիջելով այդ ժանրում.

Հանճարների երգերն անմահ ոսկեհանքից են ծնվում,
Սիրուց անդավ, Արդար հոգու տառապանքից են
ծնվում,
Տիեզերքի գաղտնիքների գոց դռները բացելու,
Արարչի հետ խոսք-զրույցի արծագանքից են ծնվում:

Կամ՝

Կառուցածդ պիտի պահես խնամքով,
Ունեցածդ՝ հպարտությամբ, հարգանքով,
Թե օջախիդ հարգը ինքդ չիմանաս,
Չի սրբանա հացդ Տիրոջ օրհնանքով…

Բանաստեղծ, արձակագիր, մանկագիր Լ. Սարգսյանը Լոռվա բնաշխարհում է ծնվել, Վահագնին նրա ծննդավայրն է, որի մաքրամաքուր ակունքներից է սերել բանաստեղծի գրական հյուսվածքը:

1962 թվականին Լ. Սարգսյանն ավարտել է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի պատմալեզվագրական ֆակուլտետը: Հիրավի մեծ ու տաղանդավոր անհատականություններ են ձևավորվել այս կուրսում՝ գրողներ, գիտնականներ Հրանտ Մաթևոսյան, Ֆելիքս Մելոյան, Միհեր Կարապետյան, Ռոբերտ Դանիելյան, Մելս Սանթոյան, Գևորգ Թոսունյան, Ռուդոլֆ Ավագյան…

Լիպարիտ Սարգսյանը սիրով ու ակնածանքով է հիշում իր դասախոսներին՝ Արարատ Ղարիբյանին, Արշավիր Շավարշյանին, Աշոտ Աբրահամյանին, Վաչե Պարտիզունուն, Մորուս Հասրաթյանին, որոնցից ոչ միայն մասնագիտական, այլև կյանքի դասեր է առել: Հիշում է ինչպես 1950-ական թվականների վերջերին Մանկավարժական ինստիտուտում կազմակերպվել էր հանդիպում Մարտիրոս Սարյանի հետ, և դասախոս Արշալույս Բաբայանի հորդորով երիտասարդ Լիպարիտը կարդաց նկարչին նվիրված իր բանաստեղծությունը…Երանելի տարիներ մայր բուհի կամարների ներքո…

Աբովյանական բուհից սկիզբ է առել դեպի գրականություն տանող ճանապարհը, որի տարբեր հատվածներում գրական առատ հունձք է արել բանաստեղծը՝ ի վերուստ տրված ձիրքով ու շնորհով իր շուրջը ստեղծելով գրական հետաքրքիր ու յուրօրինակ մթնոլորտ: Նրա գրչին են պատկանում «**Սպասումներ**» (1967), «**Մի բուռ ցորեն**» (1974), «**Մարդ և հող**» (1978), «**Ակոս**» (1983), «**Վահագնի**» (վիպակ պատանիների համար,1986), «**Արմատական ծառեր**» (վիպակներ, պատմվածքներ, 1991), «**Սիրտս ձեզ եմ բացում**» (1998), «**Խաչված ճակատագիր**» (2000), «**Հող և հաց**» (բանաստեղծություններ, 2003), «**Հիշողության արահետներով**» (հուշակնարկներ, էսսեներ, գրախոսականներ, 2010), «**Կարոտի եզերք**» (2010), «**Բախտդ հեռվում մի որոնիր**» (քառյակներ, 2012), «**Արարման խորհուրդ**» (բանաստեղծություններ, 2013), «**Արդար ճանապարհ**» (բանաստեղծություններ, 2016), «**Իմ երգաշխարհը**» (2018) և այլ գրքեր:



Նրա «Վահեի երգը», «Հող և հաց», «Ակոս», «Արմատահան ծառեր», «Կարոտի եզերք», «Բախտդ հեռվում մի որոնիր», «Արդար ճանապարհ» գրքերն արժանացել են տարբեր մրցանակների: Ճանաչված մի շարք գրողներ և գրականագետներ բարձր գնահատական են տվել Լիպարիտ Սարգսյանի պոեզիային՝ մանկական ստեղծագործություններին, բանաստեղծական ժողովածուներին ու հիանալի քառյակներին: Հեղինակի տարիների վաստակը բազմիցս գնահատվել է կառավարության, Հայաստանի գրողների միության և տարբեր կազմակերպությունների կողմից:

2018-ը նոր է մեկնարկել, բայց արդեն ընթերցողի սեղանին է «Իմ երգաշխարհը» ժողովածուն, որն ամփոփում է հեղինակի վերջին տարիներին գրած բանաստեղծությունները, ութնյակները, տրիոլետները և քառյակները:

«Լիպարիտ Սարգսյանի ստեղծագործական աշխարհը առաջին տողից ի վեր արարչագործության ամբողջական պատկերն է, որն իր մեջ է առել մարդ ու բնություն գոյածևերը,-գրում է գրող Ֆելիքս Բախչինյանը:-Ավելի մանրամասնելով այդ փոխկապակցությունը, կարող ենք ասել, որ այնտեղ Արարման մեծ ոգին զգալու հետ զուգահեռ՝ մարդու անցավորության փիլիսոփայությունն է: Անցավորության իմաստախոհության հետ զուգահեռ՝ հայրենական եզերքների ու բնության օրհնաբեր կենդանությունն է: Օրհնաբեր այդ կենդանության հետ զուգահեռ՝ օջախի կրակն ու ընտանեկան սիրո դրախտային թագավորությունն է…Եվ այդ ամենը հոգուց բխող երգի թև է, երգի թրթիռ ու երգաշխարհ, որի մասին խոսելուց առաջ վայելել է պետք այն, ինչպես դա ես ինքս արի»:

Լ. Սարգսյանի ստեղծագործությունները թարգմանվել են ռուսերեն, անգլերեն, բելառուսերեն, լիտվերեն, սերբերեն, մշտապես տեղ են գտել դպրոցական դասագրքերում, նրա տեքստերով գրվել են բազմաթիվ երգեր:

Լիպարիտ Սարգսյանի երգերը ժամանակի համար են, նրանք կարող են դիմանալ ժամանակի բոլոր փորձություններին՝ ամեն անգամ ավելի ու ավելի մաքրվելով ու մաքրագործելով ընթերցողի միտքն ու հոգին այն հաստատ համոզմունքով, որ մարդուն ու մարդկայինը լափող նյութը երբևէ իր տեղը կզիջի բարությանն ու խոսքի ուժին.

Կգա՞ օրը, երբ որ մարդը խոսքով իշխի աշխարհին,
Գեղեցիկը տիրի հոգուն՝ ազնիվն, արդարն ու բարին,
Ձենքերը բյուր ու բազմանուն թանգարանին
պահ տրվեն,
Որպես գործիք ավերումի, սատանայի ու չարի…

Սիլվա ԱՍՐՅԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ....

➢3 զիան ու ժողովրդական բանահյուսության տարբեր ժանրեր: Այս ժողովածուի նյութերով ամբիոնի դասախոսները մասնակցել են նաև Լենինականի մանկավարժական համալսարանում կազմակերպված հանրապետական գիտաժողովին:

Հայ ժողովրդական էպոսն ուսումնասիրության և հիացմունքի անսպառ նյութ է. «Հովսեփ Օրբելին և «Սասունցի Դավիթ» հայ ժողովրդական էպոսը» խորագիրը կրող հոդվածների ժողովածուն դրա վառ վկայությունն է: Եռալեզու առաջաբանում Ա. Դոլուխանյանը հանգամանորեն ներկայացնում է էպոսագիտության ասպարեզում Հ. Օրբելու դերը: Հրաշապատում հեքիաթին բնորոշ տարրերը ներկայացված են Լ. Հովսեփյանի «Հրաշապատում հեքիաթի տարրերը «Սասնա ծռեր» էպոսում» հոդվածում: Էպոսի ամբարած պատմական ատաղձը պատմագրության հետ զուգահեռ կապի մեջ քննում է Պ. Սահակյանը «Սասունցի Դավիթ» էպոսն ու Թովմա Արծրունու Պատմությունը» հոդվածում: Հեղինակն ընդգծում է սասունցիների կենցաղի նկարագրությունների պատմականությունը էպոսում:

Էպոսի հմայքը, ներքին աշխուժությունն ու իմաստությունն ապահովում են կանայք, որոնց կերպարների հետաքրքիր մեկնաբանություններ տալիս է Ռ. Դոլուխանյանը «Կանանց կերպարների հերմենևտիկան ըստ Հ. Օրբելու» հոդվածում՝ զուգադրելով Հ. Օրբելու բնութագրումների հետ: «Սասունցի Դավիթ» էպոսն իր դաստիարակչական նշանակությամբ կարևոր է հանրակրթական դպրոցում, իսկ նրա դասավանդման մեթոդիկան առ այսօր հնարավոր է կատարելագործել նոր մոտեցումներով. այս լուծումներն է տալիս Գ. Մարդյանը «Սասունցի Դավիթ» էպոսի ուսուցումը հայկական դպրոցների տարբեր դասարաններում» հոդվածում: Ներկայացված են էպոսի ուսուցման ինովացիոն մեթոդներ և հնարներ, հատուկ ուշադրություն է հատկացված էպոսի խորհրդանիշների մեկնաբանություններին և դրանց դասավանդման մեթոդիկային:

Ժամանակի խորքից է միայն հնարավոր լինում գնահատել մշակութային առումով եզակի արժեք ունեցող իրադարձություններ, որոնք ճակատագրական են դառնում ժողովրդի համար՝ ուղղորդելով նրան իր գոյության ողջ ընթացքում. այդպիսիք են Վ. Բրյուսովի «Поэзия Армении» ժողովածուն և Վենետիկի Մխիթարյան միաբանության հաստատումը, որոնց նվիրված են ***«Վ. Բրյուսովի «Поэзия Армении» ժողովածուն և հայ հին ու միջնադարյան քնարերգությունը»*** (Երևան, 2016) և ***«Հոդվածների ժողովածու. Նվիրվում է Վենետիկի Սուրբ Ղազար կղզում Մխիթարյան միաբանության հաստատման 300-ամյա հոբելյանին»*** (Երևան, 2017) ժողովածուները:

Վենետիկի Մխիթարյան միաբանության բազմակողմանի գործունեությանը նվիրված հոդվածների ժողովածուն մի յուրօրինակ նվիրում ու շնորհակալություն է գիտության այն մշակներին, ովքեր հայ ոգու լույսը վառ պահեցին գալիք սերունդների համար: Ա. Դոլուխանյանի «Վիկտոր Լանգլուան Վենետիկի Մխիթարյան միաբանության մասին» հոդվածը Մխիթարյան Միաբանությունը լուսաբանում է ըստ ֆրանսիացի հայագետ Վիկտոր Լանգլուայի հանգամանալի ուսումնասիրության:

Վենետիկի Մխիթարյան մատենադարանի ձեռագրերի և ձեռագրացուցակի քննությանն է վերաբերում Լ. Հովսեփյանի «Վենետիկի Մխիթարյան միաբանության ձեռագրացուցակը» հրապարակումը:

Հայագիտության մեջ չկա մի դրվագ, երևույթ կամ իրադարձություն, որ գրաված չլինի Ղևոնդ Ալիշանի հետաքրքրությունը: Մխիթարյան Միաբանության հանրագիտակ ուսումնասիրող Ղևոնդ Ալիշանի աշխատությունները սկզբնաղբյուր են թե սկսնակ, թե փորձառու գիտնականի համար: Անվանի հայագետի «Սիսական» աշխատության մատենագրական ու գրական արժեքն է քննվում Պ. Սահակյանի հոդվածում:

Ալիշանը նաև բանաստեղծական թռիչք ունեցող գիտնական էր. նրա գիտական խոսքը նույնպես հագեցած է բանաստեղծականությամբ: Իրենց ճանաչվածությամբ հեղինակի գիտական երկերին չեն զիջել քնարական հյուսվածքները. Ղ. Ալիշանի «Երգ Նահապետի» և «Նուագք» գրքերին է վերաբերում Գ. Մարդյանի «Ղևոնդ Ալիշանի բանաստեղծությունների մանկավարժական և ճանաչողական արժեքը» հրապարակումը: Հոդվածագիրը կարևորում է այս բանաստեղծությունների հայրենասիրական շունչը, նրանց դաստիարակչական նշանակությունը:

Մխիթարյան միաբանությունն իր նպատակների կենտրոնում ունեցել է կրթությունը, և «Բազմավէպ» հանդեսի ուսուցողական նյութերն ու թարգմանությունները առաջին հերթին ունեցել են ուսուցողական նպատակ: Այս շարքում խիստ ուշագրավ են Մարկոս Ավրելիուսի մանկավարժական և բարոյախոսական հայացքների վերաբերյալ նյութերը, որոնք լուսաբանվում են Ռ. Դոլուխանյանի «Հռոմի նշանավոր Մարկոս Ավրելիոսը աղջիկների դաստիարակության մասին» հոդվածում:

Ամբիոնի գիտական գործունեությունը չի սահմանափակվում միջնադարյան հեղինակների երկերի կամ հին և միջնադարյան գրականության ընթացքի ուսումնասիրությամբ. քննության նյութ են դարձել նաև հայ մշակույթի հետ կապված և պատմության հետ իրենց խոր կապը զգացող հեղինակներ: Արդի գրական դեմքերից առանձնանում է Գևորգ Դևրիկյանը, որի գեղարվեստական արձակը հայ ժողովրդի պատմության, գրականության մի շտեմարան է: Ամբիոնը երախտագիտությամբ ***«Հայրենասիրության պատգամաբերը»*** խորագրով հոդվածների ժողովածուն նվիրել է Գևորգ Դևրիկյանին՝ ծննդյան 80 և հայոց հերոսամարտերի 100-ամյակների առիթով: Հեղինակի գրական վաստակը ցույց է տալիս, որ միջնադարյան հայ մշակույթը հնարավորություն է ստեղծում նոր ժամանակներն առավել խորապես ընկալելու. միջնադարի փիլիսոփայական ըմբռնումը թույլ է տալիս հեղինակին զուգահեռներ տեսնել միջնադարի և արդի ժամանակների խնդրահարույց հարցերի՝ հայապահպանության և ազգային արժեքների վերագնահատման միջև: Նրա դավանանքը մեկն է. իսկական դասը տալիս է հայրենիքը:

Վերը նշված ժողովածուները ամբոնի կողմից գիտական հրապարակումների համար ի սկզբանե որդեգրած սկզբունքներով ընդհանուր են. ունեն բազմալեզու գիտական առաջաբաններ, որոնք ժողովածուներին տալիս են միջազգային հնչեղություն, ապահովում են գիտական նորույթ և հետաքրքրություն, նյութերը լուսաբանվում են գրական կապերի համատեքստում, լայնորեն շրջանառվում են այլալեզու աղբյուրներ, ունեն բազմաբովանդակ հավելվածներ՝ առավել կարևոր հատվածների օտարալեզու թարգմանություններով: Գիտական այս հարուստ կենսագրությամբ տակավին երիտասարդ ամբիոնը հավաստում է միջնադարում կենսակերպի վերածված հավատամքը. «Բանք սպառին, գործքն թագաւորեն»:

Լիլիթ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ

Կարևորը երգի հոգին է

Մանկավարժական համալսարանում հյուրընկալվել էր սիրված երգիչ, երգահան Սևակ Խանաղյանը: Ուսանողական խորհրդի նախաձեռնությամբ կազմակերպված հանդիպմանը ուսանողները ոչ միայն հարցեր ուղղեցին հյուրին, այլև առիթ ունեցան զրուցելու նրա հետ:

«Ես միշտ մեծ ոգևորությամբ եմ հանդիպում ուսանողների հետ, նրանցից ստանում եմ դրական լիցքեր, նրանք ինձ ուժ ու թարմություն են հաղորդում»,- ասաց Սևակը:

Ուսանողները երգչին ուղղեցին իրենց հետաքրքրող հարցերը՝ «Դեպի Եվրատեսիլ» նախագծի 2-րդ եթերաշրջանի մասնակցությունից մինչև նոր երգեր ու ծրագրեր:

Անդրադառնալով Եվրատեսիլին մասնակցելուն՝ Սևակ Խանաղյանը նշեց. «Եթե չունենայի հաղթելու ձգտում, երբևէ չէի մասնակցի այս մրցույթին: Ես մեծ հաճույքով կներկայացնեմ իմ երկիրը և ամեն ինչ կանեմ, որ հաղթեմ»:

Խոսելով նման մրցույթներում հայերեն լեզվով երգ ներկայացնելու մասին՝ երգիչը նկատեց, որ երաժշտությունն ազգություն ու լեզու չի ճանաչում և կապ չունի ինչ լեզվով ես երգում. կարևորը երգի հոգին է, մաքրությունը և անկեղծությունը:

«Եթե գա մի ժամանակ, որ չկարողանամ երգել, ես, այնուամենայնիվ, կմնամ երգերաժշտության ասպարեզում՝ կսկսեմ նվագել: Ես չեմ պատկերացնում իմ կյանքը երաժշտական աշխարհից դուրս»,- ասաց Սևակ Խանաղյանը: Նա հավելեց, որ իր հաջողության բանաձևը պայմանավորված է այն հանգամանքով, որ իրեն կյանքում երբևէ ոչինչ հեշտ չի տրվել, ամեն ինչի համար պայքարել է ու շատ աշխատել:

Երգիչը նշեց, որ մոտ ապագայում հանդիսատեսի դատին կհանձնի նոր երգեր, իսկ երգ գրելու համար շրջակա աշխարհում իրեն ոգեշնչում է ամեն բան:

Հրաժեշտից առաջ Սևակ Խանաղյանն իր երկրպագուների համար անակնկալ էր պատրաստել՝ ակապելլա երգեց նրանց ամենասիրելի երգերից:

Սոնա ԱՐԱՄՅԱՆ

Նշեցին Տյառնընդառաջը

Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետում տոնական տրամադրություն էր. ուսանողական խորհրդի կողմից Տյառնընդառաջի կապակցությամբ կազմակերպվել էր մեծ միջոցառում: Տյառնընդառաջի խորհրդի ներկայացմամբ էլ ազդարարվեց միջոցառման սկիզբը: Տյառնընդառաջի տոնական սեղանը զարդարված էր ավանդական տարեհացով, մետաղադրամ թաքցված գաթայով, քաղցրավենիքով, գինով. մի խոսքով այս ամենը իսկական տոնական տրամադրություն էր ստեղծել ֆակուլտետում: Միջոցառմանը ներկա էին Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի դեկան Ռուզաննա Սադոյանը, ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմը, ուսանողական խորհրդի նախագահ Ներսիկ Մարգարյանը և ուսանողներ: Էլ ինչ Տյառնընդառաջ առանց խորհրդանիշ համարվող կրակի: Ներկաները բարեմաղթանքներ հղեցին, խոսեցին օրվա խորհրդի մասին և ցատկեցին կրակի վրայով, որը պիտի զորացներ և ուժ հաղորդեր իրենց:

ՁՄԵՌԱՅԻՆ ԱՂԱՎՆԱՁՈՐՈՒՄ

«Աննկարագրելի հանգիստ է՝ լի դրական զգացողություններով, հարազատ ու ջերմ մթնոլորտը մեզ բոլորիս դարձրել է մի ընտանիք»,- այսպես բնութագրեցին իրենց հանգիստը Աղավնաձորի ուսումնամարզական բազայում հանգստացող Մանկավարժական համալսարանի ուսանողները:

Այս տարի էլ ավանդույթի համաձայն բուհի բոլոր ֆակուլտետներից 6-ական, նաև բուհի և Հենակետային վարժարանի 2017 թվականի «Լավագույն ընթերցողները», վոլեյբոլի և ֆուտբոլի աղջիկների հավաքականի մարզիկները հնարավորություն են ստացել իրենց հնգօրյա հանգիստը անցկացնել Աղավանձորում:

Առօրյան հագեցած ու հետաքրքիր է. ինտելեկտուալ մրցույթներ, սեմինարներ, բանավեճեր, սպորտային խաղեր, երաժշտական երեկոներ, երգ ու պար:

Շախմատի և սպորտի ամբիոնի դասախոս, ձմեռային հանգստի աշխատանքները ղեկավարող Արման Գևորգյանը նշեց, որ հանգստի կազմակերպման ծրագիրը կազմելիս կարևորել են հատկապես, որ այն լինի ակտիվ ու գերհագեցած: «Սպորտային, ինտելեկտուալ և մշակութային բազմազան խաղերում ուսանողներն առաջնորդվում են «Կարևորը մասնակցությունն է» կարգախոսով: Նման հավաքները նպաստում են համախմբվելուն, ընկերասիրությանը, կոլեկտիվ մտածողության զարգացմանը: Խմբում ունենք տաղանդաշատ շատ ուսանողներ, ովքեր էլ ավելի են հետաքրքիր են դարձնում աղավնաձորյան հանգիստը»,- ասաց նա:

Ուսանողական խորհրդի փոխնախագահ Էդիկ Գուլյանը նշեց, որ մինչ հանգստի մեկնարկը ուսանողական խորհուրդը շախմատի և սպորտի ամբիոնի հետ համատեղ կազմել է ծրագիր և օրակարգ: «Հանգստի առաջին իսկ օրերից ուսանողների հետ հանդիպումներ են կազմակերպվել՝ ճշտելու նրանց նախասիրությունները, լսելու առաջարկները, բացի այդ, այստեղ էլ կա առաջարկների տուփ, որտեղ ուսանողները կարող են գրել և ներկայացնել իրենց առաջարկները, նկատառումները և այլն: Ամեն ինչ անում ենք հօգուտ ուսանողների»,- ասաց Էդիկ Գուլյանը:

Ձմեռային հանգստի ընթացքում բուհի պրոռեկտորներն այցելեցին Աղավնաձոր՝ քննարկելու ուսանողներին հետաքրքրող ու հուզող հարցերը:

Ուսումնագիտական գծով պրոռեկտոր Սրբուհի Գևորգյանը նկատեց. «Ընդհանուր առմամբ մարդու ակտիվության դրսևորման եղանակները միշտ համահունչ են լինում նրա պահանջմունքներին: Ազատ ժամանցը յուրաքանչյուրի համար կարևոր բաղադրիչ է, նման պայմաններում ակտիվ հանգիստ կազմակերպելը նպաստում է ուսանողների բնական պահաջմունքների բավարարմանը. հաղորդակցական և ընկալունակության պահանջմունքների նոր մակարդակը բերում է նորանոր համագործակցային եղանակների դրսևորմանն ու զարգացմանը»:

Ուսումնական գործընթացների հարցերով պրոռեկտոր Միեր Մելիք-Բախշյանն էլ կարևորելով ուսումնական գործընթացից առաջ ուսանողների հանգիստը՝ նկատեց. «Դա շատ լավ է անդրադառնում ուսանողների ուսումնառության վրա, քանի որ նրանք կարծում են, որ բուհը որևէ ձևով մտածում է իրենց մասին, իրենք գնահատված են իրենց զգում և խրախուսվում են: Այսպիսով, ուսման որակն ավելի է բարձրանում, ուսանողներն ավելի շատ են ձգտում լավ սովորել, որպեսզի օգտվեն բուհի ընձեռած նման հնարավորություններից»: Պրոռեկտորը հավելեց, որ ամեն տարի ծրագրային փոփոխություն լինում է՝ հաշվի առնելով նախորդ տարիներին հանգստացած ուսանողների առաջարկությունները:

Ընդհանուր հարցերի գծով պրոռեկտոր Արմեն Թամազյանի կարծիքով ձմեռային հանգիստը ուսանողներին տալիս է հաղորդակցման հնարավորություն, դրական լիցքեր՝ նոր կիսամյակին լավ պատրաստվելու համար, ինտելեկտուալ և սպորտային խաղերն ու ժամանցն էլ նրանց համար կարևորագույն տարրերից մեկն են, որոնք շատ դրական են ազդում ուսանողների հետագա ուսումնառության վրա. այդ ամենը նրանց հնարավորություն է տալիս դրսևորվելու և ինքնահաստատվելու:

«Երբ ավարտում էի դպրոցը, ինձ թվում էր ընկերական միջավայրը վերջանում է, սակայն համալսարանում հասկացա, որ բուհը մի ուրիշ հետաքրքիր աշխարհ է, որտեղ կարող ես ձեռք բերել իսկական ընկերներ. դրա վառ ապացույցն այս հանգստի ընթացքում իմ նոր ընկերներն են»,- ասաց Օտար լեզուների ֆակուլտետի 2-րդ կուրսի ուսանողուհի Իրինա Ասլանյանը և բոլոր ուսանողների անունից հավելեց, որ առօրյան հագեցած է, ամեն ինչ կանոնակարգված ու հետաքրքիր է, սնունդն էլ՝ համեղ և օգտակար:

Հատուկ կրթության ֆակուլտետի ուսանողուհի Տաթևիկ Սայադյանը ևս տպավորված է հանգստի կազմակերպման մակարդակից. «Առաջին օրվանից տպավորված եմ, հետաքրքիր հանգիստ է, նոր մարդկանց եմ ճանաչում ու հասկանում եմ, թե ինչ հետաքրքիր ու լավ ուսանողներ կան մեր համալսարանում, ինչ լավ երիտասարդություն ունենք: Բուհի բոլոր քայլերը օգուտ ուսանողի են, մեր համալսարանի ուսանողակենտրոն քաղաքականությունը նկատելի է յուրաքանչյուր ծրագրում: Շնորհակալ եմ նման հնարավորություն ընձեռելու համար»:

Բուհի բուժքույր Աղավնիկ Ծատուրյանն այս օրերին հետևում է հանգստացողների առողջությանը, հարկ եղած դեպքում ցուցաբերում առաջին բուժօգնություն: Չնայած լուրջ իրավիճակներ չեն եղել, սակայն վստահեցնում է՝ կանխվել են մի քանի ուսանողների մոտ նոր սկսվող սուր շնչառական հիվանդությունները, իսկ բուժկետը ապահովված է անհրաժեշտ դեղորայքով:

Ուսանողների անվտանգությունն էլ ապահովում են բուհի անվտանգության աշխատակիցները: Հանգստի ընթացքում ոչ մի արտառոց դեպք չի գրանցվել, ուսանողները հանգիստ ու կարգապահ են:

Այս հանգիստն էլ ավարտվեց, յուրաքանչյուր ուսանող իր հետ տարավ լավ տպավորություններ, դրական լիցքեր, որպեսզի ուսումնական տարում էլ ավելի արդյունավետ աշխատի:

Ուսանողական հանգստի վերջին օրն ավարտվեց խորհրդանշական խարույկով, երգ ու պարով:

Սոնա ԱՐԱՄՅԱՆ

ԱՐՏՈՆԱԳԻՐ ԳՅՈՒՏԻ ՀԱՄԱՐ

ՀՀ մտավոր սեփականության գործակալությունը Տակտիլային տեսողության սարք ստեղծելու համար գյուտի արտոնագիր է շնորհել Մանկավարժական համալսարանի Ակադեմիկոս Գեորգ Բրուտյանի անվան փիլիսոփայության և տրամաբանության ամբիոնի պրոֆեսոր, փիլիսփայական գիտությունների դոկտոր, Հայոց փիլիսոփայական ակադեմիայի նախագահ Ռոբերտ Ջիջյանին:

Գյուտը նախատեսված է չտեսնողների և թույլ տեսողություն ունեցող մարդկանց համար.սարքն ունի միմյանց հաջորդաբար միացված էլեկտրոնային ֆոտոխցիկ, ֆոտոէլեկտրոնային պատկերը երկչափ տակտիլային պատկերի կերպափոխման հանգույց, ինչպես նաև երկչափ տակտիլային պատկերի հարթ և ճկուն էկրան:

Էկրանը կատարված է մարդու մաշկի համապատասխան հարթ հատվածի վրա ամրակցման հանգույցի միջոցով անշարժ կիպ սևեռման հնարավորությամբ:

Ընդլայնվում են սարքի ֆունկցիոնալ հնարավորությունները, արագացվում է տակտիլային պատկերի ընկալումը:

Պրոֆեսոր Ջիջյանը սարքի ստեղծման հետ կապված հիմնական խնդիրը համարում է մարդու մաշկի իներտությունը, ինչի պատճառով սարքի հպման ազդեցությունը երկար ժամանակ մնում է մաշկի վրա. «Կա գաղափար, սկզբունք, կառուցվածք. մնում է հասկանալ, թե ինչպես փոքրացնել մաշկի իներտությունը և արդեն գործնականում կիրառել այն»:

Սուսաննա ՄԻՆԱՍՅԱՆ

Փակի՞ր աչքերդ ու կիայտնվեմ ես,
Մեղմիկ ժպիտով կամոքեմ հոգիդ,
Բյո՞ւր երազներիդ վկան կդառնամ
Ու հավերժ սիրով կմնամ կողքիդ ...
Սիրտդ էլ թե բացե՞ս՝ այնտեղ եմ դարձյալ՝
Քնքշորեն փարված ամեն մի հույզիդ ...
Անունս թե տաս՝ շուրթիդ կհառնեմ՝
Դառնալով ակունք՝ քաղցրահունչ խոսքիդ ...
Իսկ թե ինձանից շա՞տ հեռու լինես,
Կջերմացնեմ քեզ՝ արևի շողով,
Փարո՛ս կլինեմ ճամփեքիդ խրթին,
Ու միշտ կուղեկցեմ անքուն աղոթքով ...

ԱՐԺԵՔԱՎՈՐ ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ



ՀՊՄՀ կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի պրոֆեսոր, աշխարհագրական գիտությունների դոկտոր Գևորգ Կարապետյանի և աշխարհագրական գիտությունների թեկնածու Արթուր Կարապետյանի հեղինակությամբ լույս է տեսել «Կոնստրուկտիվ աշխարհագրություն (հետազոտությունների մեթոդաբանությունը, կիրառական ոլորտները, պրագմատիկ նշանակությունը)» արժեքավոր մենագրությունը: Այստեղ ամփոփված են հեղինակների կողմից վերջին 50 տարիների ընթացքում ՀՀ բնատեխնածին գեոհամակարգերում իրականացված բնական ստացիոնար, կիսաստացիոնար բարձր ճշգրտության ֆոտոգրամմետրիական, օդատիեզերական նկարահանումների լուսանկարների մշակման, գեոդեզիական գործիքային, քարտեզագրական ու բնական երթուղային հետազոտությունների ընդհանրացումների արդյունքները:

Ըստ էության, նման բնույթի, ծավալների և ճշգրտության կոնստրուկտիվ աշխարհագրական հետազոտություններ ՀՀ-ում սկսել են իրականացվել միայն 1967 թվականից, երբ մենագրության համահեղինակ Գ. Կարապետյանը ղեկավարում էր ՀՀ ԳԱԱ ԵԳԻ աշխարհագրության բաժնի, Մոսկվայի պետական համալսարանի աէրոֆոտոմեթոդների լաբորատորիայի և ԽՍՀՄ ԳԱ Աշխարհագրության ինստիտուտի կողմից կազմակերպված արշավախմբի ժամանակակից արտածին ռելիեֆ առաջացնող պրոցեսները հետազոտողների խումբը:

Այդ հետազոտությունները սկզբում կատարվել են Սևանա լճի ավազանում՝ Սևանի Ազգային պարկի կազմակերպման լանդշաֆտա-բնապահպանական հիմնավորումների համար: Դրանից հետո, նման բնույթի և ծավալների հետազոտություններ 1977-85 թթ. շարունակվել են Տավուշում՝ Իջևան-Դիլիջան-Հրազդան երկաթուղու շահագործման անվտանգության գնահատման և Դիլիջան քաղաքի կառուցապատման նոր հատակագծի ինժեներաերկրաբանական և էկոլոգիական հիմնավորումների համար:

Կոնստրուկտիվ աշխարհագրական հետազոտությունների օբյեկտներ են հանդիսացել նաև Լոռի-Փամբակի ռեգիոնի Տավուշի տարածաշրջանի ջրաէներգետիկ ռեսուրսների օգտագործման հիմնախնդիրները, որտեղ անհրաժեշտ է եղել գնահատել և կանխատեսել շրջակա միջավայրի վրա ջրային և էներգետիկ ռեսուրսների օգտագործման հնարավոր բացասական հետևանքները: Հատուկ հետազոտությունների օբյեկտ են համարվել նաև նախագծվող Արմանիսի ջրամբարի և Ջորագետ ու Դեբեդ գետերի վրա նախագծվող երեք ջրաէլեկտրակայանների կառուցման ու շահագործման բացասական հետևանքների գնահատման և կանխատեսման հիմնահարցերը: Այստեղ պատվիրվել էր հետազոտել և կանխատեսել դեռևս չկառուցված ջրատեխնիկական օբյեկտների կառուցման և հետագա շահագործման հնարավոր բացասական հետևանքները շրջակա միջավայրի վրա:

Մենագրության մեջ ներկայացված գիտական հետազոտություններն իրականացվել են նախկին ՀՍՍՀ մինիստրների խորհրդի, «Հայհիդրոէներգագիծ» ինստիտուտի, «Գեոդեզիա և Քարտեզագրություն» ՊՈԱԿ-ի և ՀՍՍՀ ԳԱ ԵԳԻ պատվերներով: Ստացված գիտական արդյունքներն այդ կազմակերպությունների կողմից օգտագործվել են կոնկրետ կիրառական նպատակների համար:

Մենագրությունը կազմված է չորս հիմնական մասերից, որտեղ քննարկվել են լեռնային բնատեխնածին գեոհամակարգերի աշխարհագրական առանձնահատկությունների հետազոտությունների մեթոդաբանությանը, կոնստրուկտիվ աշխարհագրությանը ներկայացվող ժամանակակից գիտատեսական և սոցիալ-տնտեսական պատվերները, այդ կոնտեքստում կատարվող հիմնական հետազոտությունների ներկայիս հիմնական ուղղությունները և, վերջապես, լեռնային բնատեխնածին գեոհամակարգերի տնտեսական օգտագործման ռիսկերի կանխատեսման ու կառավարման կոնստրուկտիվ աշխարհագրական սկզբունքները: Այն նախատեսված է կոնստրուկտիվ աշխարհագրության հիմնախնդիրներով զբաղվող մասնագետների, մագիստրատուրայի երկրորդ կուրսի մագիստրոսների և բակալավրիատի բարձր կուրսերի ուսանողների համար:

Ներսես ՍԱՄՎԵԼՅԱՆ
Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի գիտության և միջազգային համագործակցության հարցերով դեկանի տեղակալ, աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցենտ

«ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԳԱՎԱԹ» ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի նախաձեռնությամբ հունվարի 29-ից փետրվարի 8-ն անցկացվեց «Դասախոսական գավաթ» մարզական խաղերի առաջնություն, որին մասնակցում էին հայաստանյան 13 բուհերի՝ ՀՊՄՀ-ի, ԵՊՀ-ի, ՀՊՏՀ-ի, ԵՊԼ-ի, ՀԵՊԲՀ-ի, ՃՇԱՀ-ի, ՀԱԱՀ-ի (Ագրարային), ՀՖԿՊԻ-ի, ՀԱՊՀ-ի, ՀՈՀ-ի (Սլավոնական), ՎՊՄՀ-ի, ՀՖՀ-ի (Ֆրանսիական), ՀԱՀ-ի (Ամերիկյան) ավելի քան 250 մարզասեր դասախոսներ:

Մասնակիցները մրցեցին հրաձգություն, սեղանի թենիս, շախմատ և վոլեյբոլ մարզաձևերում.1-3-րդ տեղերը զբաղեցրածները պարգևատրվեցին գավաթներով, պատվոգրերով, ինչպես նաև՝ ՀՊՏՀ-ի ղեկավարության կողմից արժանացան հատուկ նվերների:

Մանկավարժական համալսարանից առաջնությանը մասնակցում էին բուհի Շախմատի և սպորտի, Ինֆորմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնների, ինչպես նաև «Շախմատ» գիտահետազոտական նորաբաց ինստիտուտի և Կրթական գործընթացների կառավարման և բարեփոխման վարչության աշխատակիցները:

Շախմատ սպորտաձևում ՀՊՄՀ թիմը պայքարեց 8 թիմերի հետ՝ արժանանալով հաղթական գավաթի, իսկ 2-րդ և 3-րդ մրցանակային տեղերը զբաղեցրին ԵՊՀ և ՀՈՀ թիմերը:

Մանկավարժականի թիմը սեղանի թենիսի մրցապայքարում 12 թիմերի հետ խաղում արժանացավ 2-րդ մրցանակային տեղին՝ զիջելով միայն ՀՈՀ թիմին:

Մանկավարժականի թիմը հրաձգություն սպորտաձևում 13 թիմերից զբաղեցրեց 6-րդ, իսկ վոլեյբոլում 9 թիմերի հետ պայքարում կիսեց 5-6-րդ տեղերը:

Շախմատի և սպորտի ամբիոնի դասախոս Արման Գևորգյանը նշեց, որ «Դասախոսական գավաթ» մարզական խաղերի կարևոր նպատակներից է դասախոսների օրինակով խթանել բուհական համակարգում ֆիզիկական դաստիարակության դերի բարձրացումը, միաժամանակ ընդգծեց նրա կարևորությունը երիտասարդ սերնդի կյանքում:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հեռակա ուսուցմամբ սովորող ուսանողների 2017-2018 ուստարվա առաջին կիսամյակի ուսման վարձի զեղչի դիմումները համապատասխան փաստաթղթերով ընդունվում են ս.թ հունվարի 8–ից մինչև 31-ը:

Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ.
Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97:
էլ. փոստ՝ Newspaperaspu.am, asryansilva@gmail.com
Տպագրված է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպագրատանը:
Հասցեն՝ Արշակունյաց 2
Տպաքանակը՝ 1800 օրինակ: Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է: Հղումը պարտադիր է:
Թերթը տարածվում է անվճար:
Հանձնված է տպագրության 15.02. 2018 թ.
Թերթը կարող եք կարդալ ՀՊՄՀ կայքում՝ www.aspu.am

Գլխավոր խմբագիր՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ
էջադրումը՝ Պետրոս ՎԱՐԴԱՆՅԱՆԻ
Համարի պատասխանատու՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ